# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 428 - Ա

ԱՆՆԱ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 29-րդ հոդվածով և հիմք ընդունելով կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշումը՝

1. Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի (այսուհետ՝ գրասենյակ) վերլուծության և զարգացման ծրագրերի վարչության պետ Աննա Ղարիբյանին 2026 թվականի հունիսի 7-13-ը ներառյալ գործուղել Սինգապուրի Հանրապետություն (Սինգապուր)՝ Սինգապուրի Հանրապետության արտաքին գործերի նախարարության տեխնիկական աջակցման կենտրոնի կողմից կազմակերպվող «Նորարարություններ կառավարման ոլորտում» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ սահմանված կարգով ապահովել Աննա Ղարիբյանի գործուղման ճանապարհածախսի և 2026 թվականի հունիսի 7-ի և 13-ի համար օրապահիկի հետ կապված ծախսերի հատուցումը:

3. Գրասենյակի վերլուծության և զարգացման ծրագրերի վարչության պետին՝ գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում

օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ:

4. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված մյուս ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ — Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

11.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ